ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի (ք. Քաջարան, գ. Գեղի ազդակիր բնակավայրերում) համայնքային մասհանումների ծախսման իրականացված ծրագրի մասին

«Կազմակերպությունների կողմից վճարված ռոյալթիներից Քաջարան համայնքին կատարած մասհանումների ծախսման 2024թ. ծրագիր»

1. ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը՝ Քաջարան համայնքի ավագանու որոշում 25.06.2024թ. №041-Ա,

1. Ծրագրի սկիզբը և ավարտը՝ 09. 2023թ. -12. 2024թ.

2. Ծրագրի նախագծային արժեքը՝ 190.063.600,0 ՀՀ դրամ(03.28 2024 N 439-Ն կառ որոշում)

3. Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝

1. Համայնքում տնտեսության ճյուղերից գյուղատնտեսության համար համայնքն ունի զարգացման հնարավորություն: Գյուղական բնակավայրերի համար խնդիրներից մեկը գյուղատնտեսական արդի մեքենաների սակավությունն ու որոշ տեսակների՝ բացակայությունն է: Ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների պահպանման, սպասարկման, արդյունավետ շահագործման համար գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկման կայանի բացակայությունն:

2. Քաղաքային համայնքում առկա խնդիրներից մեկը միակ մանկական զբոսայգին (այն նաև քաղաքի ամենամեծ ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքն է, մոտ 5000 մ2 մակերեսով), որտեղ կապիտալ աշխատանքներ վերջին անգամ իրականացվել են 1980-ական թվականների կեսերին՝ գտնվում է անբարեկարգ վիճակում: Գոյություն ունեցող զվարճալիքներն ու ջրային մակերեսները չեն գործում,անցուղիները քանդված են և հավելյալ վտանգ են ներկայացնում երեխաների համար, նստարաններ չկան, բացակայում է արհեստական լուսավորումը, տնկարկի կազմությունը չի համապատասխանում նորմերին և թարմացման կարիք ունի:

4. Ծրագրի նպատակը՝ 1. Համայնքի գյուղական բնակավայրերի գյուղատնտեսության զարգացում և ընդլայնում

2. Ստեղծել նպաստավոր և անվտանգ պայմաններ հանգստի, ժամանցի, բնակիչների զբաղվածության համար

5. Ծրագրով հաստատված վերջնական ակնկալվող արդյունքները՝

1. 3500մ^2 մակերեսով բարեկարգված հանրային տարածք (մանկական զբոսայգի), 2500 մ^2 մակերեսով վերականգնված կանաչ տնկարկ՝ հին տնկարկների բարելավմամբ և նոր, ֆունկցիոնալ կանաչապատմամբ, զվարճալիքներ (կարուսելներ),ջրային մակերես, արդիական և էներգաարդյունավետ լուսավորություն ժամանցի միջոցներ:

2. Գյուղացիները կստանան նոր և ավելի որակյալ տեխնիկական ծառայություններ ստանալու հնարավորություն: Մշակվող վարելահողերի մակերեսը 50%-ով ավելացնելու հնարավորություն: Հողերի բերքատվությունը 50%-ով ավելացնելու հնարավորություն

Գյուղատնտեսության ոլորտում նոր ներդրումներ ներգրավելու կարողություններ կավելանան: Կբարելավվի համայքի բնակիչների պարենային ապահովվածությունը

Արդյունքում կունենանք 600 մ^2 ընդհանուր և 170 մ^2 աշխատանքային մակերեսով տեխ.սպասարկման կայան:

Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման, պահպանման և սպասարկան արդյունավետության բարձրացում:

6. Ծրագրի փաստացի արդյունքները՝ Կազմակերպությունների կողմից վճարված ռոյալթիներից Քաջարան համայնքին կատարած մասհանումների ծախսման 2024թ. ծրագրով նախատեսած միջոցառումներից իրականացված փաստացի արդյունքներն են

1. Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների ձեռքբերում

1.1 Ձեռք է բերվել երկու անվավոր տրակտոր

2. Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցում

2.1 Ձեռք է բերվել գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթեր

2.2 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն

2.3 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի համաշինարարական աշխատանքներ

2.4 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի շինարարության տեխնիկական հսկողություն

2.5 Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի շինարարության հեղինակային հսկողություն

2.3-2.5 կետերով թվարկված միջոցառումները ավարտին կհասցրվի 2025թ.

3. Քաջարան քաղաքի փողոցի մանկական զբոսայգու վերակառուցում

3.1 Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու վերակառուցման էսքիզային նախագծի ձեռքբերում

3.2 Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն

3.3 Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու վերակառուցման համաշինարարական աշխատանքներ

3.4 Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու շինարարության տեխնիկական հսկողություն

3.5Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու շինարարության հեղինակային հսկողություն

3.3-3.5 կետերով թվարկված միջոցառումները ավարտին կհասցրվի 2025թ.

7. Ծրագրի շահառուները՝ ծրագրի շահառուները համայնքի բոլոր բնակիչներն ու հյուրերն են:

8. Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝

ՀՀ կառավարության «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» 01"09"2022թ. № 1370-Ն որոշում:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝ 21.575.000,0 ՀՀ դրամ

2. Ծրագրի փաստացի շահառուները ծրագրի շահառուները համայնքի բոլոր բնակիչներն ու հյուրերն են

3. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝

1. Ձեռք է բերվել գյուղատնտեսական մեքենա-սարքավորումներ
2. Գյուղատնտեսական մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման կայանի կառուցման հետ առնչվող միջոցառումներ
3. Քաջարան քաղաքի մանկական զբոսայգու վերակառուցման համաշինարարական աշխատանքների հետ առնչվող միջոցառումներ

4. Ծրագիրն իրականացնողները և աջակցողները՝

տեղական ինքնակառավարման մարմիններ, հավելյալ ֆինանսական միջոցներ տրամադրողներ,այլ ներդրողներ

5. Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝

ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում կունենանք բարեկարգ մանկական զբոսայգի, գյուղատնտեսական արդի մեքենաներ, մեքենաների սպասարկման կայանատեղի

6. Հաշվետվության հրապարակումը՝ հաշվետվությունը հրապարակվել է Քաջարան համայնքի պաշտոնական կայքում 28.02.2025թ. :

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Զոհրապ Առաքելյան